ՕՐԱԿԱՐԳ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի (հարցման կարգով)

1. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ակադեմիական կազմի տարեկան գործունեության գնահատման և վարկանիշավորման կարգը հաստատելու մասին:**

2. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում օտարերկրացի ուսումնառողների ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքի ստուգման կարգը հաստատելու** և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2014 թվականի մայիսի 7-ի նիստում (արձանագրություն N 6) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում օտարերկրացի ուսումնառողների ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների գնահատման կարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին:

3. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ընդունված, բանակ զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, ժամկետից շուտ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանող **Գեորգի Վիլհելմի Բաբուրյանի** ուսանողական իրավունքները վերականգնելու մասին:

4. **Ընթացիկ հարցեր:**

   1) **Ատենախոսությունների թեմաներ և գիտական ղեկավարներ հաստատելու մասին:**

   Ատենախոսությունների թեմաները քննարկվել և հաստատվել են գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 17-ի (արձանագրություն N 6) և 2022 թվականի դեկտեմբերի 14-ի (արձանագրություն N 7) նիստերում:

2) Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Լիանա Հայկազի Գրիգորյանի** և նույն ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր **Արմեն Գևորգի Ճուղուրյանի «Ֆինանսական վերլուծություն և որոշումների կայացում»** ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին:

Ուսումնական ձեռնարկը, 200 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի, ժամը 11:00-ի նիստում (արձանագրություն N 14): Այն նախատեսվում է հրատարակել հրատարակչական պլանով՝ «Տնտեսագետ» հրատարակչությունում:

3) Տնտեսագիտության տեսության ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Տաթևիկ Արտաշեսի Մկրտչյանի «Վարքագծային տնտեսագիտություն»** դասախոսության նյութերի հրատարակությունը երաշխավորելու մասին:

Դասախոսության նյութերը, 200 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 5-ի, ժամը 11:00-ի նիստում (արձանագրություն N 15): Այն նախատեսվում է հրատարակել հրատարակչական պլանով՝ «Տնտեսագետ» հրատարակչությունում:

4) «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Ալբերտ Արմենի Հայրապետյանի «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի իրավական տեսանկյունը» (The Legal Aspect of Nagorno-Karabakh Issue)** մենագրության հրատարակությունը երաշխավորելու մասին:

Մենագրությունը հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 14-ի (արձանագրություն N 7) նիստում:

Գիտական քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2022 թ. դեկտեմբերի 21
Երևան